

## ԵՐԵՄՊԱՏՎԱԾ... ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հարուստ է հայկական պատմաճարտարապետական ժառանգությունը: Այն մարմնավորում է շինարար ժողովրդի քաղաքային ստեղծագործական ջանքերը, կառուցողական և գեղարվեստական քարձր վարպետությունը, ունի ճարտարապետական ազգային վառ նկարագիր: Պատմական Հայաստանի տարածքը՝ արև մուտքից մինչև արև ելք, ծածկված է հայ հանճարի քարձրարվեստ կոթողներով, որոնք լայն ճանաչում են գտել քաղաքակիրթ աշխարհում, քարձր գնահատանքի արժանացել հայրենի և օտարազգի մասնագետների կողմից: Այո՛, Հայաստանը հռչակված է որպես քարի ճարտարապետության դասական երկիր: Հայ ճարտարապետների ու քարագործ վարպետների համբավը տարածվել է հեռուները: Այդ հարուստ ժառանգության անբաժան մասն են կազմում «Արև ելից կողմանց» Հայաստանի կամ պատմական Արցախի ճարտարապետական հուշարձանները, որոնք այդ հերոսական լեռնաշխարհի զարդն են: Ոչ լրիվ տվյալներով, միայն այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքում տարբեր ժամանակների վերաբերող պատմաճարտարապետական հուշարձանների ընդհանուր քանակը հասնում է 1600-ի:

Արցախ-Խաչենի պատմաճարտարապետական հուշարձանները, վաղնջական ժամանակներից մինչև միջնադարի քաղաքային փուլերը, արդյունք են հայ ժողովրդի արև ելից հատվածի քաղաքային շինարարական գործունեության, վկա են նրա պատմական դժվարին ճակատագրի, հանուն ազատության և անկախության մղած հերոսամարտերի: Երկրամասը առանձնապես հարուստ է միջնադարյան հուշարձաններով: Հնագույնը դրանցից Ամարասի վանքն է՝ հիմնադրված 4-րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի կողմից, դառնալով Արև ելից Հայաստանի հոգևոր և մշակութային նշանավոր կենտրոն, առաջին դպրոցներից մեկը: Ամարասում է գործել Լուսավորչի թոռը՝ Գրիգորիս Եպիսկոպոսը, որը 388թ. նահատակվելով թաղվել է Եկեղեցու ավագ խորանի տակին գտնվող դամբարանում: 5-րդ դարով են թվագրվում Եղիշե առաքյալի և Հռոմե վանքերը, 6-7-րդ դարերով՝ Օխտը դռնի վանքը, Վաչագանի Եկեղեցին և այլն: Չարգացած միջնադարը (12-13-րդ դդ.) հանդիսացել է Արև ելից Հայաստանի ճարտարապետական արվեստի գերագույն ծաղկման ժամանակաշրջանը, երբ ստեղծվել են այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Խոտավանքը կամ Դադիվանքը, Հակոբ ավանքը, Գտչավանքը, Մայրաքերոլը և իրավացիորեն հայկական միջնադարյան ճարտարապետության հանրագիտարան համարվող հռչակավոր Գանձասարի վանքը: Եկեղեցուց, ժամատնից ու վանքապատկան այլ շենքերից քաղաքացած ու լեռնային համայնապատկերի զարդը հանդիսացող այդ հոյակապ համալիրն իր ճարտարապետագեղարվեստական քաղաքային արժանիքներով կանգնում է հայկական միջնադարի այնպիսի գլուխգործոցների կողքին, ինչպիսիք են Կենտրոնական Հայաստանի Հաղպատի, Սանահնի, Մշկավանքի, Հաղարծնի, Գոշավանքի, Մակարավանքի և ուրիշ վանքային համալիրներ: Գանձասարի վանքը անքակտելիորեն կապված է հայ ժողովրդի պատմական ճակատագրին: Այն հանդիսացել է հռչակավոր կրոնամշակութային կենտրոն, «Արև ելից կողմանց» Հայաստանի կաթողիկոսական աթոռատեղին, ազգային-ազատագրական շարժումների կազմակերպավարը: 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի սկզբին Գանձասարի կաթողիկոս Եսայու անմիջական ղեկավարությամբ են Պետրոս Առաջին կայսրի օրոք քաղաքային անկախություններ վարվել Ռուսաստանի հետ միավորվելու առաջարկությամբ: Արցախ աշխարհը չափազանց հարուստ է հայկական արվեստի մի ինքնուրույն քաղաքային հանդիսացող խաչքարերով, որի քաղաքային քարձրարվեստ օրինակները Դադիվանքին են: Երկրամասում մեծ քանակություն են կազմում

պաշտպանական, քաղաքացիական, արտադրական ու այլ ք նույնի կառուցվածքները՝ անառիկ ք երդերն ու ամրոցները, մեխիքական ապարանքները (որոնք մեծ ծառայություն են մատուցել երկրամասի պաշտպանությանը), կամուրջներն ու քարավանատները, ձիթհանքերն ու ջրաղացները, տնտեսական նպատակների ծառայող այլև այլ հուշարձաններ: Դրանց էթնոմշակութային պատկանելիությունը, այսինքն՝ հայկական լինելը անհերքելի է, վկայված է օտարագրի և հայ պատմիչների հավաստի տեղեկություններով, ինչպես նաև հուշարձանների պատերին պահպանված հազարից ավելի վիմական հայերեն արձանագրություններով, որոնք խնամքով հավաքված ու հրատարակված են ք ազմավաստակ հայագետ-վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի կողմից «Դիվան հայ վիմագրության» հինգերորդ հատորում: Առավել չափով այդ ապացուցում են իրենք՝ արցախական աշխարհի հուշարձանները: Եկեղեցական և աշխարհիկ ք ազմապիսի շենքերի հատակագծային՝ ծավալատարածական հորինվածքներով, կիրառված կառուցողական արվեստով ու կոնստրուկտիվ համակարգերի հնարքներով, ճարտարապետագեղարվեստական արտահայտչամիջոցներով, զարդարվեստի հարուստ ու ք ազմատարք երակ մոտիվներով և այլ կարգի առանձնահատկություններով այդ հուշարձանների անխտիր, միջնադարի ք ոլոր փուլերում, ի հայտ են ք երում որոշակի ընդհանրություններ Կենտրոնական Չայաստանի նույն փուլերի ճարտարապետության հետ, նույն արմատներն ունեն, ինչպես նույն ծառի ճյուղերը՝ հայ ճարտարապետության ընդհանուր նվաճումների ք աղկացուցիչ և անք աժան մասն են կազմում, հայ ժողովրդի ճարտարապետության մի ինքնատիպ դպրոցն են ներկայացնում: Որպես դրա ապացույց կարելի է ք ազմաթիվ օրինակներ ք երել, սակայն ներկա հոդվածի շրջանակները թելադրում են ք ավարարվել մի քանիսով: Գիտական գրականության մեջ լայնորեն հայտնի Գանձասարի վանքի ժամատան (1266թ.) ծածկի կոնստրուկտիվ համակարգը՝ իրականացված փոխախաչվող կամարներով, հար և նման է Չաղպատի վանքի սուրք Նշան եկեղեցու ժամատան (13-րդ դարի սկիզք) և Նոյեմք երյանի շրջանի Մշկավանքի ժամատան (նույնպես 13-րդ դարի սկիզք) ծածկերի կոնստրուկտիվ համակարգին: Ընդհանրության օրինակները շատ ու շատ են: Դրանք ի հայտ են գալիս ճակատների հարդարման, նրանց վերնամասերում կտիտորական (նվիրատուի) պատկերաքանդակի տեղավորման, շքամուտքերի ձև երում լուսամուտների երեսակալման միջոցներում, գմք եթների թմք ուկների նիստերի դեկորատիվ մշակման, գմք եթների հովհարած և վեղարներում և այլ կարգի ք ազմաթիվ հնարքներում: Նույնպիսի զուգահեռներ ակնառու են աշխարհիկ շենքերում, պաշտպանական կառույցներում, կամուրջներում, քարավանատներում և այլ կարգի կառուցվածքներում: Դա լավագույն ապացույցն է այն ք անի, որ արցախական աշխարհի ճարտարապետական դպրոցն իր զարգացման ք ոլոր փուլերում գտնվել է ստեղծագործաբան սերտ կապերի մեջ Կենտրոնական Չայաստանի ճարտարապետության հետ, յուրացրել է դրա մեծ նվաճումները, դրանցով կատարելագործվել: Որ այդպիսի առնչություններ մշտապես եղել են, դրա ապացույցը նախ և առաջ երկրամասի ճարտարապետական ողջ մշակույթն է՝ իր ք ոլոր հատկանիշներով: Պատմական դժվար անցուդարձերն իրենց դրոշմն են դրել արցախյան աշխարհի պատմաճարտարապետական հուշարձանների վրա: Ոսոխների ավերումներն ու ք նության քայքայիչ ազդեցությանը ենթարկված, խնամքից ու հոգատարությունից համարյա զուրկ, մեծ մասամք կիսակործան ու ավեր վիճակում հուշարձաններ ժառանգեց Լեռնային Ղարաք աղի Ինքնավար Մարզը: Թվում էր, թե կենսագործելով անցյալի մշակույթի նկատմամք հոգատար վերաք երմունքի մասին լեռնյան պատգամներն ու կատարելով պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին գործող պետական օրենքը, պիտի որ

բ արեփոխություններ առաջանային երկրամասի հուշարձանների վիճակում:  
Սակայն այդպես չեղավ:

Խորհրդային կարգերի գոյության տասնամյակների ընթացքում խնամքից ու հոգատարությունից զուրկ շատ հուշարձաններ շարունակվեցին քանդվել ու ավերվել: Դեռևս 1970թ. Մարտիրոս Սարյանի ստորագրությամբ մի նամակ ուղղվեց Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Յ. Ալիևին, խնդրելով գործուն միջոցներ կիրառել ինքնավար մարզի և Ադրբեջանի տարածքում գտնվող մյուս շրջանների հայկական հուշարձանների պահպանության և վերականգնման ուղղությամբ, առաջարկելով դրանում մեր ընկերության օգնությունը: Որպես արդյունք այդ դիմումի, ինքնավար մարզում ստեղծվեց Ադրբեջանի հուշարձանների պահպանության ընկերության՝ իրավունքներից ու նյութական միջոցներից զուրկ մի մասնաճյուղ, որն ի վիճակի չեղավ որևէ ինչ դրական փոփոխություն առաջացնել օգնություն աղերսող հուշարձանների վիճակում: Դրանք շարունակվում էին ավերվել ու ոչնչացվել կամ իսպառ դադարել գոյություն ունենալուց, ինչպես իրենց բախտակից՝ Արևմտյան Հայաստանի հուշարձանները: Վերջին տարիներին առանձին հուշարձաններում վերջապես սկսվեցին վերականգնման որոշ աշխատանքներ: Բայց ինչպե՞ս: Շուշիի դեռևս 1920թ. միջնադեպերի ժամանակ այրված ու ավերված հայկական թաղամասում կանգուն մնացած մի տուն վերականգնվեց, բայց՝ դիմափոխված կերպով: Նույն սկզբ ունքով «նորոգվեց» Կիրովաբադի հայկական եկեղեցու կամարասրահը, որի հետևանքով հայկական կամարները փոխարինվեցին այլաոճ կամարներով: Վանքասարի եկեղեցին «վերականգնման» ենթարկվելով, նույնպես աղավաղումների վառ կնիք կրեց: Շուշիի նախկինում գոյություն ունեցող 7 եկեղեցիներից «ողջ» մնացած «կանաչ ժամը» այժմ օգտագործվում է որպես հանքային ջրերի ըմպելասրահ, ըստ որում, «հարմարեցնելիս» լուրջ վնաս է հասցված հուշարձանին: Բացառություն է կազմում միայն 19-րդ դարի վերջում կառուցված՝ մեր ժամանակներում խիստ հոշոտված Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, որը իմացությամբ, նվիրումով և հայրենասիրաբար կատարում է Երևանից գնացած վարպետ Վոլոդյա Բաբայանը: Այս ամենը հետևանք է այն բանի, որ ինքնավար մարզում չեն եղել ոչ նախագծային, ոչ էլ վերականգնման մասնագիտացված կազմակերպություններ՝ կոմպլեկտավորված բանիմաց հայ մասնագետներով: Նախագծերը կազմվում էին Բաքվում, հայկական ճարտարապետությանը անծանոթ, նաև՝ խեղաթյուրման հակված մասնագետների կողմից: Բաքվից էլ իրականացվում էր վերականգնման աշխատանքների «ղեկավարությունը»: Իսկ այժմ այստեղ զարմանալիորեն բողոքներ են հնչում «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալական զարգացման արագացման 1988-1995թթ. միջոցառումների մասին» ՍՄԿԿ Կենտկոմի՝ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի համատեղ որոշման այն կետի դեմ, որով նախատեսվում է մարզի հայկական հուշարձանների վերականգնման գործում ներգրավել նաև հայ վարպետներին: Սա միանգամայն օրինական և ողջունելի առաջարկ է՝ այսուհետև կանխելու համար մարզի առայժմ միայն մի քանի հուշարձաններում տեղ գտած աղաղակող թերություններն ու նենգափոխումները: Բողոքողները պիտի հասկանան, որ այդ հուշարձանների տերը ոչ միայն մարզի հայ բնակչությունն է, այլ՝ ողջ հայ ժողովուրդը: Մարզի տարածքում գտնվող հայկական եկեղեցիները «անցյալի վտանգավոր կրոնական կենտրոններ» չեն, ինչպես որակել է Ադրբեջանական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի մի հանձնաժողով, այլ բարձրարվեստ ճարտարապետական հուշարձաններ՝ միանգամայն արժանի պահպանության, ինչպես հայ ժողովրդի ճարտարապետական ողջ ժառանգությունը: (Երևի «վտանգավոր կենտրոն» որակումն է նաև պատճառը, որ մինչև այժմ մարզի բնակչության մեծամասնությունը կազմող հայերի հավատացյալ հատվածին հնարավորություն չի տրվել գործող գոնե մեկ եկեղեցի ունենալ): Բազմաթիվ են փաստերը

հուշարձանների ավերման, դրանց քարերի և խաչքարերի՝ շինարարության կարիքների համար օգտագործման դեպքերի մասին: Այդպիսիք տեղի են ունեցել նաև «հետազոտական» նպատակներով կատարված աշխատանքների ժամանակ գանձախույզների կողմից: Բերենք միայն մի քանի փաստեր: Հողօգտագործման նպատակով ք ուղղոգերներով ավերվել ու գետնին են հավասարեցվել 13 պատմահնագիտական հուշարձաններ: Պայթուցիկ նյութեր են օգտագործվել Մեծ Թաղլարի Ծծախաչ և Ազոխի քարանձավներում, Ամարասի և Կաղանկատույքի ք նակավայրերի տարածքներում: Փորումներ են կատարվել Գրիգորիսի դամբ արանում (Ամարասի վանքում), երկրաք անական հետախուզություն կատարելու պատրվակով հորանցքեր են փորված Դադիվանքի հուշարձանների տակ, դրանով իսկ նպաստելով հուշարձանների ավերմանը:

Ֆիզուլիում, շինարարական աշխատանքների ժամանակ ք ացված հուշարձանում, հայտնաք երվել են կարև որ իրեր (ըստ տեղեկությունների՝ ձեռագրեր), որոնք անհայտ է, թե որտեղ են հիմա: Նույն ճակատագրին է արժանացել Ազոխի քարանձավի մի գաղտնարանում՝ Գոտիչի վանքում

հայտնաք երված եկեղեցական սպասք: 12-13-րդ դարերի երկու կամուրջ, 13-17-րդ դարերի 3 մատուռ, շուրջ 70 խաչքար, դամբ արաններ՝ առանց ըստ օրինի արձանագրելու (չափագրելու, լուսանկարելու և այլն) գոհ են դարձել Սարսանգի ջրամբ արի կառուցմանը՝ քարերն օգտագործելով պատվարի մեջ կամ թողնելով ջրամբ արի հատակում: Վասն արդարության պիտի ասել, որ դրանում մեղավոր են նաև մարզի կուսակցական և պետական օրգանները, որոնք տասնամյակներ շարունակ հանդուրժել են հուշարձանների նկատմամբ այդպիսի վայրագ վերաք երմունքը: Ինքնավար մարզի հուշարձանների գիտական հաշվառման և պրոպագանդման հարցում տասնամյակներ շարունակ իշխել են խտրականությունն ու անիրավությունը: Հուշարձանների զգալի մասը չի մտցվել պետական պահպանության ենթակա հանրապետական և միութենական ցուցակները: Ինքնավար մարզի պատմաճարտարապետական հուշարձանների վերաք երյալ հրատարակված ուղեցուցային քարտեզներում և գիտահանրամատչելի գրականության մեջ նշված են հատուկենտ հայկական հուշարձաններ: Արցախի իրական պատմությունը աղավաղելու գործում որոշակի «ներդրում» են կատարել գիտնականներ

Չ. Բունիաթովը, Ռ. Գեյուշևը, Ֆ. Մամեդովան և ուրիշներ, որոնք առաջ են քաշում Դարաք աղիհայության, ինչպես նաև իրենց մշակույթի աղվանական ծագման մասին անհիմն տեսակետ: Դա պատմության կեղծարարության անհանդուրժելի, գիտական հիմքերից զուրկ տեսակետ է, որից, ցավոք, շարունակում են կառչել: Ըստ Էության անհիմն «գաղափարական» այդ շտեմարանից շտապեցին սնվել Ադրք եջանի քաղաքաշինության, ճարտարապետության և արվեստի մի քանի պատմաք աններ, հանդես գալով իրենց նույնչափ անհիմն, խորապես միտումնավոր, պատմական փաստերը անտեսող աշխատություններով: Ծարտարապետության թեկնածու Է. Ավալովը «Շուշի քաղաքի ճարտարապետությունը» (Բաքու, 1977թ.) գրքում, հետևելով իր ուսուցիչ Սալամգադեին, ճգնում է ներկայացնել քաղաքի հիմնադրման, քաղաքաշինական զարգացման ու ճարտարապետության պատմությունը՝ միտումնավոր անտեսելով Շուշիի վերաք երյալ հայկական աղք յուրները, որոնք առատ նյութ են պարունակում հայերի կողմից քաղաքի հիմնադրման և հայ ք նակչության շինարարական գործունեության վերաք երյալ: Պարզապես հեղինակը «մոռացել» է հիշատակել, որ Անդրկովկասի այդ նշանավոր առև տրամշակութային կենտրոններից մեկի կառուցապատումը հայերն են արել: Ծարտարապետության դոկտոր Դ. Ախունդովը իր «ուսումնասիրության» ոլորտում ընդգրկելով հայկական խաչքարերը (որոնց քմահաճորեն «խաչդաշ» է անվանել), վերջերս լույս տեսած իր «Հին և վաղ միջնադարի Ադրք եջանի ճարտարապետությունը» (Բաքու, 1986թ.) գրքում անհաջող փորձ է անում միայն

հայ ժողովրդին պատկանող այդ ինքնատիպ արվեստին վերագրել աղվանական ծագում, ըստ որում, ցուցաբերում է կատարյալ անտեղյակություն խաչքարերի արվեստի առաջացման (դեռևս 4-5 դդ.), գաղափարական և ովանդակության, գեղարվեստական օրինաչափությունների ու զարդարվեստի մոտիվների մեկնաբանման հարցերում: Նույն դիրքերից նա իր գրքի հինգերորդ՝ «Կովկասյան Աղվանքի վանքերի պաշտամունքային սիմվոլիկան և ճարտարապետությունը» բաժնում «խիզախում» է ապացուցել անապացուցելին: Կորցնելով գիտնականի խիղճը, առանց հաշվի առնելու հուշարձանների վերաբերյալ մատենագրական և վիճակագրական հավաստի տեղեկությունները, մեկ հարվածով աղվանական է դարձնում Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի մի շարք եկեղեցիներ ու վանքեր, նույնիսկ հայ ճարտարապետության մի այնպիսի բարձրակետ, ինչպիսին Գանձասարի վանքն է: Սա արդեն ոչ միայն կեղծիք է, այլև՝ կողոպուտ: Դ. Ախունդովի

«աղվանացման» տեսության արդյունքը եղավ այն, որ 1987թ. պաշտոնական շրջաբերականով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շրջագործկոմներին ուղարկվեցին իրենց շրջաններում տեղաբնակ աշխարհաքրիստոնեական հուշարձանների ցուցակները, համաձայն որոնց այդտեղ նշված էին հուշարձանները գլխավորապես համարվում են աղվանական: Հայկական են ճանաչված միայն նորերը, մեծ մասամբ՝ 17-19-րդ դարերում կառուցվածները: Օրինական է հարցնել՝ եթե Լեռնային Ղարաբաղի հայկական հուշարձանները աղվանական են, հապախ՞նչն է պատճառը, որ տասնամյակներ շարունակ դրանք զուրկ են եղել խնամքից՝ հոգածությունից, այն ժամանակ, երբ Ապշերոնի թերակղզում, Բաքվում ու այլ տեղերում գտնվող մեծ թվով ադրբեջանական հուշարձաններ կոնսերվացվել, մասնակի կամ ամբողջական վերականգնման են ենթարկվել, գտնվում են միանգամայն բարվոք վիճակում: Պատասխանը դրոշմված է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հուշարձանների տխուր ճակատին:

Համառոտակի այդպիսին են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատմաճարտարապետական հուշարձանների տխուր վիճակը, դրանց նկատմամբ եղած վերաբերմունքը վկայող փաստերը: Անտարակույս, պատմության «երեսպատումը» (չօգտագործենք ավելի խիստ արտահայտություն), որ վիրավորում է մարզի հայ բնակչության ազգային արժանապատվությունը, և ավելի բխում ադրբեջանական ժողովրդի շահերից, չի ծառայում երկու ժողովուրդների բարեկամությանը, ինտերնացիոնալ դաստիարակությանը: Ահա թե ինչու մեր երկրի կյանքում արմատական փոփոխություններ մտցնելու, մերժելի երևույթների դեմ վճռական պայքարի ու խորհրդային բազմազգ ժողովուրդների միջև եղբայրական կապերի սերտացման ժամանակներում մենք պարտավոր ենք վերացնել այն պարսավելին, ինչը վնասում է հարևան երկու ժողովուրդների համակեցությանը:

**«Խորհրդային Հայաստան»,**

**31 մայիսի, 1988թ., Երևան**